



Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքիյան 2

21.12.2016թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ **2017 թվականի փետրվարի 11-ին, ժամը 10⁰⁰-ից Երևան քաղաքի Զաքիյան 2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) փեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.**

- **ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն.**
- **ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն.**
- **«Փաստաբանի օր» սահմանելու մասին հարց:**

1. Օրակարգային հարցերով **քվեարկությունը** սկսվում է **2017 թվականի փետրվարի 11-ին, ժամը 10⁰⁰-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17⁰⁰-ին:**

2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց **թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)** սկսվում է **2017 թվականի հունվարի 14-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի հունվարի 19-ին (ներառյալ):**

3. ««Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանները կարող են **փաստաբանի օրվա առաջարկները** սահմանված կարգով ներկայացնել **2017 թվականի հունվարի 14-ից (ներառյալ) մինչև 2017 թվականի հունվարի 19-ը (ներառյալ):**

4. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց **թեկնածուների քարոզչությունը** սկսվում է **2017 թվականի հունվարի 20-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի փետրվարի 9-ին, ժամը 18⁰⁰-ին:**

5. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

6. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

7. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկությունները, կարող եք բեռնել ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ